ԱՆՀԱՏ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

“ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ” ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 7854-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Պլանավորման և քաղաքականության ձևավորման վերաբերյալ նոր հիմունքների և հիմնարար սկզբունքների պիլոտային ներդրում

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ PSMP2 –C- 3.1.3.3

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից ՝ Պետական հատվածի արդիականացման երկրորդ ծրագրի (ՊՀԱԾ II) իրականացման նպատակով և մտադիր է այդ գումարի մի մասը ծախսել սույն հայտարարությունում նկարագրված խորհրդատվական և այլ ծառայությունների գնման համար:

Սույն առաջադրանքի նպատակն է աջակցել և նպաստել Համաշխարհային Բանկի Տեխնիկական Աջակցության խմբի կողմից (հետայսու ՀԲ խումբ) ռազմավարական պլանավորման և քաղաքականության ձևավորման բարելավմանն ուղղված առաջարկությունների պաշտոնական ընդունմանը և պիլոտային ներդրմանը:

Ուստի ՀՀ կառավարության աշխատակազմը եւ ՀՀ ֆինանսների նախարարության “Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող բոլոր անհատ խորհրդատուներին ներկայացնել ծառայությունների մատուցման առնչությամբ հետաքրքրվածության իրենց հայտերը:

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն՝ մատնանշելով, որ վերջիններս համապատասխան որակավորում ունեն վերոնշյալ ծառայությունների մատուցման համար:

Հանձնարարականն իրականացնելու համար անհատ խորհրդատուին կտրամադրվի մոտ 4 ամիս:

Որակավորում եւ պահանջներ

Առաջադրանքի իրականացման համար կվարձվի անհատ խորհրդատու, որն ունի հետևյալ որակավորումները և փորձը.

- Բարձրագույն կրթություն իրավաբանության, պետական կառավարման, տնտեսագիտության կամ հարակից այլ ոլորտներում,

- Հայաստանում պետական հատվածի բարեփոխումների և պետական կառավարման ոլորտների գերազանց իմացություն,
- Համապատասխան իրավական ակտերի /օրենքների, կանոնադրությունների նախագծերի/ մշակման առնվազն 3 տարվա փորձ,
- Հայեցակարգային փաստաթղթերի և հաշվետվությունների մշակման փորձ,
- Փորձ կապված ռազմավարական պլանավորման, քաղաքականության ձևավորման և կատարողականի կառավարման հետ,
- Անգլերեն և հայերեն լեզուների գերազանց իմացություն:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել Համաշխարհային Բանկի «Ուղեցույցի՝ ՎՀՄԲ փոխառությունների եւ ՄՀԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» պարբերություն 1.9-ին (Խորհրդատուների ուղեցույց), որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Անհատ խորհրդատուի ընտրությունը կիրականացվի համաձայն 2004թ. մայիսին հրատարակված եւ վերանայված 2006թ. հոկտեմբերին եւ 2010թ. մայիսին ՀԲ Ուղեցույցների՝ ՀԲ վարկառուների կողմից խորհրդատուների ընտրություն եւ վարձում, շրջանակներում սահմանված Բաժին V-ում ներկայացված Անհատ խորհրդատուների ընտրության մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված անհատ խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն ստորև ներկայացված հասցեով (անձամբ, կամ փոստով, կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. ապրիլի 29-ը, ժամը 17:00**:

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն. Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am